ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐՈՆԻԿ ԵՐԻԿԱՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԴՈՒՄԱՆՅԱՆ Գ.Դ.[1], ԱՄԻՐԻԿՅԱՆ Ս.Ռ.[1], ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐՅԱՆ Դ.Գ.[1] ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ա.Կ.[2], ԱՐՇԱԿՅԱՆ Է.Ա.[2]

[1]ՀՀ Առողջապահության նախարարության առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ, Երևան, Հայաստան

[2] Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի առողջապահության կազմակերպման և բժշկական իրավունքի ամբիոն

Ողջ աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում, տարեց տարի արձանագրվում է քրոնիկ երիկամային հիվանդությունների (ՔԵՀ) հիվանդացության և վերջինիս հետևանքով առաջացած մահացության ցուցանիշի կայուն աճ: ՔԵՀ տարածվածության աճը կազմում է տարեկան շուրջ 8%, իսկ երիկամային փոխարինող բուժման կարիք ունեցող հիվանդների թիվը հասնում է շուրջ 1.4 միլիոնի: Պատճառներից են՝ կյանքի միջին տևողության ավելացումը, ինչպես նաև՝ ՔԵՀ հանգեցնող հիվանդություններով հիվանդացության ցուցանիշների աճը:

Ներկայումս, ամբողջ աշխարհում շուրջ 1.8 մլն. մարդ կարիք ունի հեմոդիալիզի կամ երիկամի փոխպատվաստման: Տարեց տարի ավելանում են նաև դիալիզի համար անհրաժեշտ ծախսերը: Միևնույն ժամանակ, զարգացող երկրներում ՔԵՀ հիվանդացության ցուցանիշների աճն անհամաչափ է դրանց բուժման համար տրամադրվող միջոցներին, ուստի, այսօրվա հրամայականն է՝ ՔԵՀ խնդրին գլոբալ մոտեցման շեշտը տեղափոխել դեպի հիվանդության վաղ հայտնաբերում և կանխարգելում:

Ներկայումս, համաձայն միջազգային գիտական տվյալների, հիմնավորված է, որ շաքարային դիաբետի ելքը, դիաբետով և հիպերտենզիայով հիվանդացությունն ու մահացությունը պայմանավորված են երիկամների ախտահարմամբ (ըստ վիճակագրական տվյալների, դիաբետով հիվանդների շուրջ 35%-ի մոտ զարգանում է դիաբետիկ նեֆրոպատիա), ուստի, շաքարային դիաբետը և հիպերտենզիայով ուղեկցվող հիվանդությունները հանդիսանում են ՔԵՀ ռիսկի հիմնական գործոնները:

Հայաստանում, 2010թ. միայն միզասեռական համակարգի հիվանդությունների (ՄՀՀ) տարածվածությունն ընդհանուր հիվանդացության մեջ կազմել է 5.6%, իսկ մահացությունն՝ ընդհանուր մահացության ցուցանիշում՝ շուրջ 2.9%: 2008-2010թթ. բնակչության շրջանում ՄՀՀ հիվանդացությունն աճել է մոտ 2.4%-ով, իսկ մահացությունը՝ 50-ով%:

ՀՀ հեմոդիալիզի ծառայություն գործում է 11 բժշկական կենտրոնում, որից հինգը գտնվում է Երևանում: Հեմոդիալիզ ստացողների թիվը, 1 մլն. բնակչության հաշվով, կազմում է տարեկան շուրջ 160 հիվանդ: Հայաստանում հիվանդների հեմոդիալիզային բուժումը իրականացվում է պետական պատվերի շրջանակներում և կազմում է 18,100 դրամ՝ հեմոդիալիզի մեկ սեանսի համար: ՀՀ 1993թ-ից, «Արաբկիր» ԲԿ-ում, տարեկան միջին հաշվով, կատարվում է 10 երիկամի փոխպատվաստման վիրահատություններ:

Մարզերում և Երևանում աշխատանքային խմբի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում մշակվել է առողջապահական համակարգում քրոնիկ երիկամային անբավարարությամբ պայմանավորված բեռի նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիր, որն ընդգրկում է.

ա) ՔԵԱ հայտնաբերման և կանխարգելման միջոցառումներ, ներառյալ միկրոալբումինուրայի և միկրոհեմատուրիայի զուգակցված հետազոտության կազմակերպումը,

բ) հեմոդիալիզի ծառայության օպտիմալացում, ներառյալ Հայաստանում հեմոդիալիզի համար անհրաժեշտ լուծույթների և պարագաների արտադրության և արտահանման հնարավորությունների ճշտումը,

գ) երիկամի փոխպատվաստման զարգացման հեռանկարներ, ներառյալ դոնորների համակարգված բազայի ստեղծում, մահացած դոնորից պատվաստանյութի ստացման մեխանիզմների հստակեցում:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY